ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐՈՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Սահմանադրության 107-րդ հոդվածի համաձայն՝ առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար Ազգային ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 19.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորընտիր Ազգային ժողովի առաջին էթիկայի հանձնաժողովն ստեղծվում է առաջին նստաշրջանում, իսկ նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ էթիկայի հանձնաժողովի անդամների թիվը, գործունեության ժամկետը, Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցությանը վերապահված էթիկայի հանձնաժողովի անդամի (անդամների) տեղը (տեղերը), ինչպես նաև էթիկայի հանձնաժողովի գործունեության ժամկետում Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցությանը վերապահված էթիկայի հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնները սահմանվում են էթիկայի հանձնաժողովի ստեղծման մասին Ազգային ժողովի որոշմամբ, որի նախագիծը ներկայացնելու իրավունքն ունի խմբակցությունը:

Նախագծով առաջարկվում է ստեղծել 10 անդամից կազմված պատգամավորական էթիկային առնչվող հարցերով Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով (այսուհետ՝ էթիկայի հանձնաժողով)՝ երկու տարի գործունեության ժամկետով:

Կանոնակարգի 19.1-ին հոդվածի 6-րդ և 7-րդ մասերին համապատասխան՝ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը վերապահվում է Էթիկայի հանձնաժողովի հինգ անդամ նշանակելու իրավունքը, Ազգային ժողովի «Ուժեղ Հայաստան» խմբակցության վերապահվում է Էթիկայի հանձնաժողովի երեք անդամ նշանակելու իրավունքը, իսկ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցությանը վերապահվում է Էթիկայի հանձնաժողովի երկու անդամ նշանակելու իրավունքը:

Կանոնակարգի 19.1-ին հոդվածի 9-րդ և 10-րդ մասերին համապատասխան՝

1) Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը վերապահվում է Էթիկայի հանձնաժողովի առաջին նախագահին, ինչպես նաև Էթիկայի հանձնաժողովի գործունեության ժամկետում Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը հասանելիք մյուս պաշտոններում Էթիկայի հանձնաժողովի նախագահ և նրա տեղակալի նշանակելու իրավունքը.

2) Ազգային ժողովի «Ուժեղ Հայաստան» և «Հայաստան» խմբակցություններին վերապահվում են Էթիկայի հանձնաժողովի գործունեության ժամկետում Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցություններին հասանելիք համապատասխան պաշտոններում Էթիկայի հանձնաժողովի նախագահ կամ նրա տեղակալ նշանակելու իրավունքը:

Հաշվի առնելով, որ պատգամավորական էթիկայի բարձր չափանիշների սահմանումը, ինչպես նաև պատգամավորների վարքագծին առնչվող հարցերի քննության համար ինստիտուցիոնալ արդյունավետ մեխանիզմի առկայությունը խորհրդարանական ժողովրդավարության կարևոր բաղադրիչներ են, սույն նախաձեռնությամբ ակնկալվում է ձևավորել պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննության արդյունավետ, թափանցիկ և հաշվետու խորհրդարանական հարթակ՝ նպաստելով պատգամավորների վարքագծի միասնական չափանիշների

պահպանմանը և ըստ այդմ՝ բարձրացնելով Ազգային ժողովի գործունեության նկատմամբ հանրային վստահությունը: